

ՈՃԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ  
ՍՈԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ  
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կառուցվածքային լեզվաբանության կարևորագույն հասկացություններից մեկը մակարդակի հասկացությունն է: Լեզվի բաղադրիչները կազմում են իրար հետ փոխադարձաբար կապված ու միմյանցով պայմանավորված համակարգեր: Այդ բաղադրիչները միմյանց նկատմամբ գտնվում են ենթադասության և գերադասության հարաբերության մեջ, այսինքն կազմում են մակարդակների ստորակարգություն /հիերարխիա/, ըստ որի տվյալ կարգի միավորները ենթադասվում են և ծառայում հաջորդ, ավելի բարձր կարգի միավորների համակարգին: Այս փաստը թույլ է տալիս լեզուն դիտելու որպես միմյանց վրա բարձրացող, միմյանց հաջորդող մակարդակների կառուցվածք: Այսպես օրինակ, հնչույթային մակարդակը ստորադասվում է ձևային մակարդակին և ծառայում է ձևային կազմելուն, ձևային մակարդակը ստորադասվում է բառային մակարդակին և այլն:

Ամերիկյան նկարագրական լեզվաբանության մեջ ընդունվում է 2 մակարդակ՝ հնչույթային և ձևային, և նույնիսկ ասույթի վերլուծությունը հանգում է ձևայինների ու նրանց դասերի որոշմանը, այսինքն՝ բոլորովին դուրս է մնում բառը որպես լեզվի միավոր:

Լեզվաբանների կողմից առավել ընդունելի է համարվել եմիլ Բենվենիստի տեսությունը, որի վրա էլ հիմնվում է լեզվական կառուցվածքի մակարդակների բնութագրումը: Նա ընդունում է հետևյալ մակարդակները.

1. Տարրային, որն ամփոփում է հնչույթների տարբերակիչ հատկանիշները,
2. Հնչույթային, որի միավորները հնչույթներն են որպես ձևայինների բաղադրիչներ.

3. Նշանային, որն ընդգրկում է լեզվի իմաստակիր միավորները, որոնց նա տալիս է ընդհանուր «բառ» անվանումը,
4. Ստորոգային, որի միավորը նախադասությունն է և հիմնական հատկանիշը՝ ստորոգումը:

Այս չորս մակարդակներից առաջինը և չորրորդը կազմում են սահմանային կամ վերջնային մակարդակները, որոնց միջև գործառուում են մյուս մակարդակների միավորները<sup>1</sup>:

Պետք է նշել, որ սույն հայեցակարգը շատ արդյունավետ եղավ թարգմանության տեսության համար և ընդունվեց որպես հիմք թարգմանչական համարժեքության մակարդակները բացահայտելու և ուսումնասիրելու համար: Այդուհանդերձ, թարգմանության մեջ այն ընդունվեց որոշ փոփոխություններով: Որպես թարգմանչական համարժեքության մակարդակներ ընդունվեցին.

1. բառը,
2. բառակապակցությունը,
3. նախադասությունը,
4. տեքստը:

Անցումը նոր՝ ավելի բարձր մակարդակի, անհրաժեշտ է դառնում, երբ նախորդ՝ ավելի ցածր մակարդակը չի տալիս անհրաժեշտ ինֆորմացիան, որն ունի բնագիրը:

Բառային համարժեքության խնդիրը տեսքտային մակարդակում բարդանում է նրանով, որ առաջնայինն այստեղ ոչ թե բնագրի և թարգմանված տեքստի միջբառային հարաբերություններն են, այլ ամբողջ տեքստի գործառական համարժեքությունը:

Այս հանգամանքը թարգմանչին թույլ է տալիս, իսկ որոշ դեպքերում նույնիսկ պարտադրում է հեռանալ բառային հիմնական իմաստից՝ պահպանելու համար տեքստի իմաստային ամբողջական կառուցվածքը: Եվ որպեսզի թարգմանչին առավելագույնս հավատարիմ մնա ելակետային տեքստին, ստիպված է լինում դիմելու որոշ փոխակերպումների՝ թարգմանվող լեզվում անհրաժեշտ համարժեքը գտնելու համար:

Այսպիսի փոխակերպումների կոնկրետ պատճառները բազմաթիվ են՝ բառի իմաստային ծավալի տարբերություն երկու լեզուներում, քերականական

կառուցվածքների տարբերություն, և վերջապես, երկու լեզուների ոճական համակարգերի անհամապատասխանություն:

Ըստ այդմ էլ փոխակերպումները իրենց բնույթով լինում են՝

1. բառային,
2. քերականական,
3. ոճական:

Ոճական փոխակերպումների անհրաժեշտությունը ի հայտ է գալիս հատկապես տեքստային մակարդակում, քանի որ թարգմանչի առջև դրված առաջնային խնդիրներից մեկն է ընթերցողի մոտ առաջացնել այն նույն հակազդեցությունը, ինչը ցանկացել է ելակետային տեքստի հեղինակը<sup>2</sup>: Ահա թե ինչու ոճական փոխակերպումները թարգմանության տեքստային մակարդակում հաճախ վերարտադրում են համարժեքների ոչ թե անվանական, այլ նշանակցային իմաստները և հիմք են տալիս պնդելու, որ բանաստեղծական թարգմանությունը իրականացվում է տեքստային մակարդակում:

Կան ծայրահեղ, իրարամերժ կարծիքներ պոեզիայի թարգմանության վերաբերյալ:

Իտալացի փիլիսոփա և գեղագետ Բենեդետտո Կրոչեն այն տեսակետի ջատագովներից է, ըստ որի բանաստեղծությունը թարգմանելի չէ ընդհանրապես, այսինքն՝ նման թարգմանության հնարավորությունն իսկ բացառվում է: Բայց կան նաև լավատեսորեն տրամադրված լեզվաբաններ<sup>3</sup>, որոնք համառորեն պնդում են, որ հնարավոր են բանաստեղծությունների կատարյալ թարգմանություններ:

Իտալացի փիլիսոփա Լուիջի Պարեյսոնը գտնում է, որ պոեզիայի թարգմանությունը հենվում է բանաստեղծական ոգու և ոչ նյութի վրա, այլապես այն կարող է հանգեցնել բովանդակային պլանի փոփոխությանը, մի բան, որից խուսափում են թարգմանչական արվեստին իրապես տիրապետողները<sup>4</sup>: Բանաստեղծությունների թարգմանության ժամանակ փոխվում են ոչ միայն բառերի շարադասությունը, այլև իրենք՝ բառերը, քանի որ թվացյալ բառային համարժեքությունը կարող է հանգեցնել իմաստափոխության և իմաստային արժեզրկման:

Բանաստեղծության թարգմանության մեջ շատ կարևոր է պահպանել բանաստեղծական դիտավորությունը, և թարգմանիչը պետք է կարողանա առավելագույնս ապահովել համարժեքությունը վերոհիշյալ բոլոր մակարդակներում:

Ցանկացած բանաստեղծության իմաստավորում հիմնվում է կրկնությունների վրա, որը կարող է արտահայտվել հնչյունային, բառիմաստային և շարադասական համակարգերում:

Եթե համեմատենք Պոլ Վեռլենի հանրահայտ "Chanson d'automne" բանաստեղծության թարգմանությունը երկու տարբեր թարգմանիչների՝ Վ.Տերյանի և Զ.Բախչինյանի մոտ, ապա ականատես կլինենք երկու տարբեր մոտեցումների: Նրանցից յուրաքանչյուրը յուրովի է գտել թարգմանության նույնականության խնդրի լուծումը: Այս բանաստեղծության մեջ իմաստային կրկնությունը հիմնվում է *sanglots longs, monotone, je pleure, suffocant, blême* բառամիավորների վրա, իսկ միապաղաղության տպավորությունը սաստկանում է միանալով անորոշության (*déjà, déjà, jours anciens*) և անելանելության գաղափարին ու վերջում ուժգանում "feuille morte" պատկերի միջոցով: Ամբողջ բանաստեղծությունը հնարավոր է ընկալել իբրև մի ոչ բացահայտ համեմատություն: Հեղինակը տվյալ դեպքում արտահայտում է իր հոգեմիժակը "feuille morte" կայուն բառակապակցության միջոցով, նորովի հնչեցնելով բաղադրիչների սկզբնական իմաստը՝ շեշտելով "morte" բաղադրիչը:

Զ.Բախչինյանի մոտ թարգմանությունը հնչում է հետևյալ կերպ.

Աշնան երգ

Ողբը երկա՛ր

Աշնան տկա՛ր

Տուփակի

Խոցու՛մ է խոր

Սիրտս մոլո՛ր

Վշտագի՛ն:

Երբ ժամն է խուլ

Հնչում, տխու՛ր

Հե՛զ հոգիս

Հիշում է իմ

Օրերը հիմ

Ու լալիս:

Գնում եմ ես

Եվ ինձ անտես

Հողմն է սև

Քշուն անդարձ

Ինչպես մեռած,

Չոր տերև:

3. Բախչինյանը պահպանել է Վեռլենի բանաստեղծության ոչ բացա-  
հայտ իմաստային մակարդակը, որն իր մեջ կրում է բանաստեղծության ամբողջ  
հուզական լիցքը՝ տալով "feuille morte"-ի ամբողջական, լրիվ թարգմա-  
նությունը:

4. Տերյանի, նույն բանաստեղծության թարգմանության մեջ կարդում  
ենք.

Անլուռ լալկան

Ջութակն աշնան

Սիրտս մոլոր

Ցավով համառ

Մաշում է հար

Եվ միալար...

Գիշերն է տոթ

Կրկին գալիս

Բերում հուշեր

Դառն անցյալից

Լալիս եմ ես

Նորից լալիս...

Գնում եմ ես,

Ու չար մի հողմ

Տերևի պես

Տանում է ինձ

Այս կողմ, այն կողմ

Տերևի պես...

Ինչպես տենում ենք Տերյանը ավելի արժեվորել է բանաստեղծության  
մեջ հնչող անորոշությունն ու միապաղաղությունը, որի ձևական արտահայտու-  
թյունն է միևնույն բառի «տերևի» բազմակի կրկնությունը առանց որևէ  
մակդիրի, ընթերցողին թողնելով վերապրելու հեղինակի տրամադրությունը,  
ինչին նպաստում է վերջին տողերի հնչերանգն ու մեղեդայնությունը:



Եթե Հ.Բախչինյանն առաջնությունը տվել է իմաստային համարժեքությանը բացահայտ և ոչ բացահայտ մակարդակներում /"feuille morte"/, ապա Վ.Տերյանը, պատկանելով խորհրդապաշտական պոեզիայի ուղղությանը, պահպանել է բանաստեղծության մեղեդայնությունը, որը լավագույնս արտահայտում է բանաստեղծական դիտավորությունը /ինտենցիան/, հավատարիմ մնալով վեպլենյան պատգամին. "de la musique avant toute chose" – «ամենից առաջ՝ երաժշտություն»:

Այսպիսով, Տերյանի մոտ նկատվում է նյութի հավատարիմ վերարտադրում հնչեղանգի պահպանմամբ, շնորհիվ ինչի պահպանվել է նաև խորքային բովանդակությունը: Ի դեպ, վերնագիրը /«Աշնան երգ»/ արդեն իր մեջ պարունակում է musique, melodie - իմաստային տարրը, որն արտահայտվում է հնչյունային մակարդակում ռեզային հնչյունների միալար կրկնության միջոցով, իսկ իմաստային մակարդակում chanson, monotone, violon, sanglot long, sonner իմաստակիր բաղադրիչների միջոցով:

Այսպիսով, բանաստեղծական տեքստի թարգմանության ժամանակ թարգմանիչը պետք է ստեղծի մի նոր տեքստ, որի բովանդակային և գեղագիտական ինֆորմացիան պետք է համարժեք լինի ելակետային տեքստին, անհրաժեշտության դեպքում օգտագործելով լեզվական և բանաստեղծական բոլոր միջոցներն ու հնարները՝ առանձնահատուկ կարևորություն տալով ռեզային փոխակերպումներին: Ինչ վերաբերվում է փաստացի ինֆորմացիային /բառային համարժեքությանը/, ապա այն իրականանում է միայն այն դեպքում, երբ վերջինս չի խեղաթյուրում բովանդակային և գեղագիտական հաղորդումը:

#### Գրականություն

1. Է.Բ.Առալյան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան 1967, /էջ 34-36/:
2. А.Д.Швейцер – Перевод и лингвистика. Москва 1973.
3. Э.Баццерелли (Милан) – О переводе "Божественной комедии" Лозинским. Система эквивалентов. В кн. Сравнительное изучение литератур. Сборник статей к 80-летию академика М.П.Алексева – Ленинград 1976 (стр. 315).
4. Նույն տեղում, էջ 317: